



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲՈՒԼԱՐԻԱՅՈՒՄ

Ժամանում Սոֆիա

Հունիսի 9-ին, չորեքշաբթի, հայրենական «Իլ—18» ինքնաթիռը, երեք ժամյա թռիչքից հետո, ժամը 11.20-ին, իջնում է Բուլղարական Ժողովրդական Հանրապետության մայրաքաղաք Սոֆիայի միջազգային օդանավակայանը, ուր հավաքված բազմահազար Բուլղարներ և հայեր ջերմորեն դիմավորում են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ժամանումը:

Նորին Ս. Օծուխյանն անձամբ ողջունելու համար օդանավակայան էր եկել Բուլղար Օրթոդոքս եկեղեցու Պետ Նաբին Ամենապատվոքյուն Տ. Կիրիլ Սրբազան Պատրիարքը, շրջապատված Ս. Սինոդի բարձրաստիճան անդամներով, հոգևորականներով:

Ամենայն Հայոց Հայրապետի ժամանումը պաշտոնապես ողջունում են Արտաքին գործերի մինիստրությանն առընթեր Կրոնական դավանությանց գործերի կոմիտեի նախագահ Մ. Քյուլյուկովն իր խորհրդականներով, ինչպես նաև սովետական ղեկավարության և Բուլղարեսովետական բարեկամության համաժողովրդական կոմիտեի ներկայացուցիչները:

Վեհափառ Հայրապետի շնորհաբեր գալուստը ողջունելու համար օդանավակայան էին եկել նաև Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրալը եպիսկոպոս Մարտիրոսյանը, թեմական խորհրդի անդամները ատենապետ Օ. Ասլանյանի գլխավորությամբ, Բուլղարիայի հայերի եկեղեցական վարչությանց անդամներ, եկեղեցական դասը, «Երևան»

մշակութային միության կենտրոնական վարչության անդամներ և Սոֆիայի ողջ հայ գաղութը:

Հուլիս էր պահը, երբ երկու եկեղեցիների պետերը՝ Հայոց Վեհափառ Հայրապետը և Բուլղար եկեղեցու Պատրիարքը, հին և մտերիմ բարեկամներ, ինչպես աստվածաշնչական Դավիթն ու Հովնաթանը, ժողովրդական խանդավառ արտահայտությունների և ծափերի տարափի տակ, ողջագուրվում էին «ի համբույր սրբութեան և սիրոյ», բուլղարական հյուրընկալ հողի վրա:

Հանուն հայ գաղութի, արծաթե ափսեի մեջ Վեհափառ Հայրապետին է մատուցվում ավանդական աղն ու հացը:

Քույր եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ, պետական պաշտոնական անձինք բուլղար և հայ, ծանոթանում են Հայոց Հայրապետի հետ:

Վեհափառ Հայրապետն ու Սրբազան Պատրիարքը Հայրը, խանդավառ մթնոլորտում և սրտազին բարեմաղթությունների տակ, առաջնորդվում են օդանավակայանի պաշտոնական ընդունելությանց սրահը, ուր փոխանակվում են բարի գալստյան և ողջույնի սրտառու խոսքեր:

Հունիսի 9-ը, որպես անմոռանալի ոսկեդեմ մի նոր էջ, կղարդարի այսուհետև բուլղար և հայ եղբայրական ժողովուրդների, Բուլղար և Հայ եկեղեցիների դարավոր բարեկամության պատմությունը, շնորհաբեր այցելությունը Հայոց Հայրապետի:

Երբեմնի բարեխնամ առաջնորդը, այժմ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, տասը տարվա բացակայությունից հետո,



ՆՈՐՐՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ Տ. ԿԻՐԻՆ ԴԱՏԻԱՐԸ ԲՈՒՆԱՐ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՅՈՒ



Ամենապատիվ Տ. Կիրիլ Պատրիարքը, Ս. Սինոդի անդամները և պր. Բյուզյուկովը ողջունում են Հայոց Հայրապետի ժամանումը

հովվապետական այցի է եկել բուլղարական օրհնյալ հոգի վրա ապրող Իր հավատացյալ և հայրենաբաղձ զավակներին, բերելով անձամբ կենարար լույսը Ս. Էջմիածնի հաղարամյա խորանների և սրտագին ողջունելով Հայոց աշխարհի և ժողովրդի:

Բուլղարական Ս. Ալեքսանդր Նևսկու Մայր Տաճարում

Փոքր դադարից հետո, պատվո ոստիկանների ջոկատի ուղեկցությամբ, հյուրընկալ ավտոմեքենաների շարանը ուղղվում է դեպի մայրաքաղաքի հուշակավոր բուլղարական Ս. Ալեքսանդր Նևսկու Մայր Տաճարը:

Տոնական տեսք է ստացել հոյակապ տաճարը:

Ուրախ և հանդիսավոր ղողանջում են զանգերը, ավետելով աստվածաշնչական Արարատի փեշերից այցի եկած Հայոց Հայրապետի շնորհաբեր գալուստը: Մայր Տաճարի շրջափակը լցվել է հայ և բուլղար ժողովապետական ժողովուրդի:

Սրբազան Պատրիարք Հայրը և Հայոց Հայրապետը, եկեղեցական փառաշուք թափուրով, առաջնորդվում են Մայր Տաճար, ուր երգչախումբը հնչեցնում է հոգևոր երգեր՝ ի պատիվ Հայոց Հայրապետի:

Երկու հոգևոր պետերի հանդիսադրությամբ և ի ներկայության պետական պաշ-

տոնական հյուրերի և հայ և բուլղար խուռներամ հավատացյալների, տեղի է ունենում հանդիսավոր մաղթանք Հայ և Բուլղար եկեղեցիների պայծառության, հայ և բուլղար ժողովուրդների բարօրության և աշխարհի խաղաղության համար:

Եկեղեցական արարողության ավարտին, նորին Սրբազնություն Ամենապատիվ Տ. Կիրիլ Պատրիարք Հայրը ջերմորեն ողջունում է Հայոց Վեհափառ Հայրապետին հետևյալ հոյակապ ուղերձով.

«Ձերդ Սրբություն, Սրբազնասուրբ և սիրելի Հովվապետ.

Հանուն ամբողջ Բուլղար եկեղեցու, մեզ համար հատկապես հաճելի է բարի գալուստ մաղթել Ձեզ մեր աստվածախնամ երկիրը, որպես մեր հրավիրյալը, որը սիրելի է մեզ համար: Ձեր եղբայրական այցելությունը մեզ համար ամենաերջանիկ մի իրողություն է և ներկայացնում է իրական մի էկոմենիկ տոն՝ այնքան սրտամոտ մեր երկու եկեղեցիների համար:

Մեր հարգանքը Հայոց Ս. եկեղեցու հանդեպ միշտ եղել է շատ մեծ: Բազմաթիվ են դրա պատճառները, բայց կարևորը կայանում է նրա խոր հնությունը մեզ: Մենք ճանաչում ենք պատմական հին ավանդության վկայությունը, ըստ որի Քրիստոսի Ավետա-



Բուզար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարքական Աթոռը
Սոֆիայի Ս. Ալեքսանդր Նևսկու Մայր Տաճարում

րանը բարողվել է Հայաստանում Հուգո, Քաղեոս և Բարթոլոմեոս առաքյալների կողմից, ինչ որ ասել է, թե Հայոց Եկեղեցին վերանում է մինչև առաքյալները:

Մենք հարգում ենք սուրբ հիշատակը Գրիգորի, Լուսավորիչը Հայաստանի, որ եպիսկոպոս ձեռնադրված լինելով Կապադոկիայի Կեսարիայի եպիսկոպոս Ղևոնդիոսի կողմից, Ս. Ավետարանը ուսուցանեց հայ ժողովրդին, Քրիստոնեության դարձրեց Հայաստանի Տրդատ Գ թագավորին, որը մինչ այդ հալածվել էր այդ կրոնի, և նրա հետ ամրոջ հայ ժողովրդին Տրված լինելով, որ քրիստոնեությունը ազատ կրոն հայտարարվեց Արևելքի Հռոմեական կայսրության մեջ 313-ին Մեծն Կոստանդինոսի կողմից, սրանով իմանում ենք, որ հայերը, իբրև ժողովուրդ և պետություն, առաջինը ընդունեցին քրիստոնեությունը:

Ս. Գրիգոր, հայ ժողովրդի Լուսավորիչը Քրիստոսի փրկարար հավատի մեջ, 303 թվականին հիմնեց էջմիածինը, հայոց Կաթողիկոսական Աթոռի նստավայրը: Այս քաղաքը իրավամբ կոչվեց էջմիածին, որ նշանակում է՝ «այստեղ է որ իջավ Աստվածորդին», որովհետև այդ քաղաքը, դարերից ի վեր և մինչև մեր օրերը, հայ քրիստոնեության կենտրոնն է:

Մենք Հայոց Ս. Եկեղեցին հարգում ենք նաև իր քրիստոնեական փառապանծ ավանդության համար: Ամենահին ժամանակներից մինչև ներկայիս, էջմիածինը տարածում է բարեպաշտության և սրբության ճառագայթները, ընդգրկելու համար, հավատի և սիրո միության մեջ, իրենց հայրենիքում ապրող կամ աշխարհով մեկ ցրված բոլոր հայերին. էջմիածինը նմանապես ամրոջ քրիստոնյա աշխարհի առաջ վկայում է իր հարատև քաղձանքի մասին զիպի հավատի միությունը բոլոր քրիստոնյա եկեղեցիների հետ և, հատկապես, Օրթոդոքս Եկեղեցու հետ: Էջմիածին սուրբ քաղաքի էկոմենիկ այս լայն բնութանմանը քրիստոնեական աշխարհի հանդեպ՝ նմանապես, մեզ համար խորին պատճառներից մեկն է այն մեծ հարգանքի, որ մենք տածում ենք Հայոց Ս. Եկեղեցու և նրա ներկա Պետի, Վազգեն Ա Պատրիարք-Կաթողիկոսի հանդեպ:

Նորին Սրբություն Վազգեն Ա Պատրիարք-Կաթողիկոսը, որին մենք ճանաչել էինք նաև անձամբ—նախքան որ նա զբաղեցներ Հայոց Եկեղեցում ամենաբարձր պարտականությունը—իր անխնայ և տքնաջան գործերով, որպես մի ամբաստի աշակերտը Մեծ Հովվի, նոր փայլով հարստացրեց հեղինակությունը հայոց փառաբանված Կաթողիկոսության,

հեղինակություն, որը ձեռք է բերվել դարերի ընթացքում նրա համառ հիմնադիրների և առաջնորդների կողմից: Նա իմաստությամբ է ղեկավարում հայ քրիստոնեության սուրբ գործը և քրիստոնյա աշխարհի առաջ նորից է հայտնաբերել էջմիածին հոգևոր փառքը: Այսպես, նա նպաստում է զորացնելու հեղինակությունը Հայաստանի խորհրդային Հանրապետության, որը պահպանում է հայկական հին անցյալի, երաշխավոր կրոնական ազատության և կառուցողը նոր կյանքի, հասարակական արդարության հիմունքների վրա:

1958 թվականին, Կիրիլ և Մեթոդիոս սուրբ եղբայրների տոնի օրը, Քուլդարական Օրթոդոքս Եկեղեցու պատգամավորության ընկերակցությամբ, մենք ուրախ եղանք այցելելու Երևան, Հայկական խորհրդային Ռեսուրսիկայի քաղաքամայրը, և էջմիածին, հայ քրիստոնեության հոգևոր կենտրոնը, իբրև հյուրերը Նորին Սրբություն Սրբազնասուրբ Կաթողիկոս Վազգեն Ա-ի: Այս այցելության ընթացքում, անձամբ մենք և մեր ընկերակիցները, կարողացանք մեզ հաշիվ տալ Հայաստանի կողմից իրականացված նշանակալի առաջադիմության մասին, բոլոր տեսանկյուններից: Հայաստանի քաղաքամայր Երևանը, քաղաքաշինական իր մեծ թռիչքով, բայց առավել ևս իր մշակութային հաստատություններով և հարստություններով, մեզ պատճառեց խորին տպավորություն: Այն եղբակցությունը, որին մենք հանդեցինք, ամենից ալիքի փաղաքշական էր Հայաստանի ապագայի համար: Էջմիածնում մենք կարողացանք զգալ Հայաստանի քրիստոնեական հին ավանդության մեծությունը: Ծարտարապետական և մշակութային հուշարձանները, ինչպես նաև էջմիածնի Առաքելական Աթոռի հավատի և բարեպաշտության փայլը դրա վկայությունն էին: Մենք հանդեցինք նաև մի կարևոր հետևություն. դա այն է, որ Նորին Սրբություն Վազգեն Ա-ի իմաստուն ղեկավարության տակ, Հայոց Ս. Եկեղեցին շարունակարար առաջադիմում է, ի փառս Աստուծո և ի բարօրություն հայ ժողովրդի:

Նորին Սրբություն Վազգեն Ա Կաթողիկոսի ջանքերի շնորհիվ, Հայոց Ս. Եկեղեցին ընդունվել է որպես անգամ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, ինչ որ մեզ ցույց է տալիս հայկական քրիստոնեության ընդհանրական ուղղությունը և նրա լուսավոր կամքը՝ Էկոմենիկ համագործակցության համար ամրոջ երկրի վրա խաղաղության համաշխարհային գործին: Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, հաստատված



Ս. Աստվածամոր և Հիսուս Մանկան իկոնը

Ս. Ալեքսանդր Նսակու Մայր Տաճարում

(Նկարիչ՝ Մարկվիչկա)

ժընկույթ, և որին մասնակցում են ամբողջ աշխարհի բազմաթիվ քրիստոնեական եկեղեցիներ, իր էկումենիկ ծրագրի գլուխը դրեց խաղաղության դատը, իր բոլոր երևույթների ներքո, որովհետև խաղաղությունը քրիստոնեական գթության արտահայտություններից առաջինն է և տիեզերական քրիստոնեական ամեն համագործակցության պայմանը։

Նորին Ս. Օծուխյուն Վազգեն Ա Կաթողիկոսի առաջնորդության ներքո, Հայոց Ս. Եկեղեցին գործարար մի անդամն է Պրագայի խաղաղության քրիստոնեական համաժողովի. սա Աստուծո և մարդկանց հանդեպ սիրո համոզեցուցիչ մի նոր ապացույց ևս է, որը ներշնչում է էջմիածին սուրբ քաղաքը։


Ահա ինչ որ մեծապես բարձրացնում է էջմիածնի Կաթողիկոսական Աթոռի հեղինակությունը և, միևնույն ժամանակ, այն գրավիչ անձնավորությունը, Վազգեն Ա Կաթողիկոսին, որն այն գլխավորում է։ Ահա ինչ որ զորացնում է մեր սերը և մեր հարգանքը Սրբազնասուրբ Կաթողիկոսի, Հայոց Ս. Եկեղեցու, Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության և ամբողջ աշխարհի բոլոր հայերի հանդեպ։

Բայց մենք ունենք նաև ուղղակի դրդապատճառներ՝ սիրելու և հարգելու համար հայ ժողովուրդը, որովհետև մենք երկար ժամանակ պատմական դժնդակ նույն պայմանների մեջ ենք ապրել, մեր երկրների միևնույն բռնազրավորի, մեր ժողովուրդների նույն ճնշողի լուծի տակ և ընդհանուր այս ճակատագրից է, որ լույս աշխարհ են եկել նույն բաղձանքները և անկեղծ ու փոխադարձ մի համակրանք։ Բավական է հիշել, որ ժողորհի կեսին, շրջան, երբ պոռթկաց բուլղարական կրոնական ազատագրության շարժումը, նրա նախանձահույզները, Կոստանդնուպոլսում, համակրանք և բարոյական նեցուկ գտան Հայ Եկեղեցու ներկայացուցիչների և հայ ժողովրդի մոտ։ Եվ ավելի ուշ, երբ Բուլղարիան ազատագրվեց շնորհիվ ուսումնականի և իր հայրենասեր զավակների մեծ անձնուրացության, բուլղար ժողովուրդը միշտ անկեղծ համակրանքով վերաբերվեց սուլթանների շրջանում, Թուրքիայում հալածանքների և կոտորածների առարկա դարձած հայերի տխուր ճակատագրի հանդեպ։

Բուլղարների և հայերի միջև փոխադարձ այս սերը դեռևս այսօր էլ գոյություն ունի մեր երկրում, որտեղ բնակվում են քաջ և երջանիկ հայեր, մեր համաքաղաքացիները, ինչպես նաև մեր ժողովուրդների և պետությունների հարաբերությունների մեջ ընդհանրապես։ Մենք լավագույն զգացմունքներ ենք սնուցում հայերի հանդեպ և կցանկանայինք, որ իրենց անկեղծության խորությունը կարենա զգալի լինել մեր բարձր այցելուի և սիրելի հրավիրյալի՝ Նորին Սրբության Վազգեն Ա Կաթողիկոսի կողմից։

Հանուն Բուլղարական Օրթոդոքս Եկեղեցու Ս. Սինոդի և անձամբ մեր անունից, արտահայտելով ամբողջ Բուլղար Եկեղեցու և մեր ժողովրդի զգացմունքներն ու հարգանքը, մենք նորից ենք ողջունում, սիրով ի Տերն մեր Քրիստոս, Վահագնապետ Ա-ին, ինչպես նաև նրա հարգարժան ընկերակցողներին, և նրանց բարեմաղթում ենք բարձր կեցություն այնքան անկեղծորեն հյուրընկալ մեր երկրում։

თ. ალიშვილის მიხედვით, ქალაქის სურათი



Վեհափառ Հայրապետը այնուհետև հանդես է գալիս հետևյալ գեղեցիկ պատասխան ուղերձով:

«Ձերդ Սրբություն Բուլղարաց Պատրիարք Կիրիլ, Մեր սիրեցյալ Եղբայր:

Անսահման ուրախությամբ կուզանք Ս. Էջմիածնեն Ձեզի բերելու Մեր բարեմաղթություններն ու ողջույնները: Մենք Մեզ պատիվ կհամարենք, որ Մեզ պատիվ վիճակվեցավ ընդունվելու այս պատրիարքական հոյակապ տաճարին մեջ, որ փարոսն է ամբողջ Բուլղարիայի ու քրիստոնեական ոգվով կլուսավորե բուլղարները:

Շնորհակալություն այն եղբայրական հրավերին համար, որով շնորհիվ այսօր կգտնվինք Բուլղարիո մեջ:

Մենք շատոնց կճանչանք Ձեզ, կճանչանք նույնպես Բուլղարիան և եղբայրական բուլղար ժողովուրդը: Թույլ տվեք այս տաճարին մեջ ողջուն մատուցանել նաև ամբողջ բուլղար ժողովուրդին, վերածնած Բուլղարիային, որ կկերտե նոր կյանք: Շնորհակալություն կհայտնենք նույնպես բուլղարական ժողովրդական կառավարության, որ այնքան պատրաստակամությամբ դուրացուց Մեր այցելությունը:

Կաղոթենք առ Աստված, որ Ձեզի պարզև աղնջատություն և քաջառողջություն, Ձեր Ս. Աջով և իմաստուն մտքով ղեկավարելու Բուլղար Օրթոդոքս Եկեղեցին, ընդմիշտ առաջին տեղերեն մին գրավելու համար քրիստոնյա եկեղեցիներու շարքին մեջ:

Ձերդ Սրբությունը ամբողջ աշխարհին հայտնի է որպես եռանդով և հավատքով առլի հոգևորական, որպես իմաստուն մարդ և լուսամիտ անձնավորություն ապնիվ նկարագրով: Մենք խորապես համոզված ենք, որ յուրաքանչյուր ոք անգամ մը միայն տեսնելով Ձերդ Սրբությունը, միշտ պիտի սիրե Ձեզ ու բնավ պիտի չմոռնա: Թույլ տվեք, որ Մեր անձը դասենք անոնց շարքին, որոնք կսիրեն Ձեզ:

Մենք հուզված ենք Ձեր ճառեն, ուր հիշեցիք հայ ժողովուրդի անցյալը և անոր հերոսական պայքարները: Շատ արդար էր Ձեր համեմատությունը բուլղար և հայ ժողովուրդներու անցյալին մասին: Անցյալին նույն ցրկանքներն ու տառապանքները կրած են մեր երկու ժողովուրդները և մեր երկու եկեղեցիները: Այսօր, սակայն, ինչպես մեր երկու ժողովուրդները, նույնպես և երկու եկեղեցիները վերածնած են ու կապին ապատ ու երջանիկ:

Կաղոթենք առ Բարձրալը, որ խաղաղություն պարզև ամբողջ աշխարհին, որպեսզի մեր ժողովուրդները այլևս երբեք չմատնվին դժբախտություններու, ցրկանքներու և հալածանքներու, և աշխարհի բոլոր ժողովուրդները ապրին խաղաղության մեջ և սիրով:



Քրիստոսի նկարը Ս. Ալեքսանդր Նևսկու Մայր Տաճարում

(Նկարիչ՝ Վասնեցով)

Այս անկեղծ զգացումներով, անգամ մը ևս շնորհակալություն կհայտնենք Ձեզի և Բուլղար Եկեղեցվո Ս. Սինոդին՝ Ձեր հրավերին և Ձեր հյուրասիրության համար:

Թող հավետ ապրի և ծաղկի Բուլղար Օրթոդոքս Ս. Եկեղեցին»:

Սոֆիայի հայոց Ս. Աստվածածին եկեղեցում

Նույն օրը, ժամը 12.30-ին, Վեհափառ Հայրապետը, նույն հանդիսությամբ, «Հրաշափառ»-ով առաջնորդվում է Սոֆիայի հայոց Ս. Աստվածածին եկեղեցին:

Եկեղեցական արարողության ավարտին, գերաշնորհ Տ. Տիրալը եպիսկոպոս Մարտիրոսյանը, հանուն Բուլղարիայի հայոց թեմի, հետևյալ ուղերձով ողջունում է Նորին Ս. Օծոթյան օրհնաբեր ներկայությունը Սոֆիայի հայոց եկեղեցու կամարների տակ:



Սլավոնական տառերի ստեղծիչ Ս. Մեթոդիոս և Ս. Կիրիլ
(Նվեր Ամենապատիվ Տ. Կիրիլ Պատրիարքից)

«Վեհափառ Տե՛ր.

Թույլ տվեք, որդիական խորունկ ակնա-
ծանքով և սրտագին երախտագիտությամբ,
ողջունել Ձեր օրհնաբեր այցելությունն ու
ներկայությունը մեր եկեղեցու կամարների
տակ, հանուն Բուդղարիայի հայոց թեմի,
իբրև աղգիս Հովվապետին, որը ոտք է դնում
Արևելյան եվրոպայի այս հողամասի վրա,
մխիթարելու համար իր հոտին: Ողջունում

եմ նաև, հանձին Ձեզ, նախկին առաջնորդին
այս թեմի, ուր զեղեցիկ և անմոռանալի հի-
շատակ է թողել, իր հովվական առաջնորդա-
կան տարիներին:

Այս գաղութը, որ մեկն է ամենահներից
հայ Սփյուռքի թեմերի մեջ, դարավոր հետ-
քեր է թողել այս երկրում, դեմքեր է տվել այս
հողին, միշտ նորոգված անցյալում հայրե-
նիքից այստեղ ապաստանածների հավելու-

մով: Թեև հետո Հայ եկեղեցու պատմական կենտրոնից և հայ հողից, այս գաղութը միշտ իրեն կապված է ղզացել Արարատի խորհրդին և հայրենի հողին: Այստեղ մեր ժողովուրդը կարծեք իր սեփական հողի վրա է ղզացել իրեն, որովհետև բուլղար հողն ու ժողովուրդը այնքան գուրգուրանքով են ընդունել իրենց ծոցում հայաժական հայ բնակորեններին: Եվ մինչև այսօր էլ, շնորհիվ ժողովրդական Բուլղարիայի բարեխնամ կառավարության հոգածության, հայ գաղութը վայելում է բոլոր իրավունքները, որպես հարազատ քաղաքացին այս օրհնյալ հողի:

Վեհափառ Տե՛ր.

Մաղթում եմ, որ Ձեր շնորհաբեր այցելությունը է՛լ ավելի ամրապնդի այս գաղութի ջերմեռանդ կասյը մեր Մայրենի եկեղեցու և մեր հարազատ Հայրենիքի հետ, և միևնույն ժամանակ լինի սրտառուչ առիթը Ձերդ Վեհափառության ցույց տալու իր գուրգուրանքը, որդիական իր հավատարմությունն ու պաշտամունքը դեպի Ս. Էջմիածինն ու նրա արժանավոր Գահակալը:

Օգտվելով պատմական ու հանդիսավոր այս առիթից, կուզենայի հանուն իմ և Բուլղարիայի հայոց թեմի, Ձերդ Վեհափառության ներկայության, մեր խորունկ շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնել Բուլղար Օրթոդոքս եկեղեցու Պետ, Նորին Սրբություն Ամենապատիվ Ս. Կիրիլ Սրբազան Պատրիարքին, այն հոգածության և ուշադրության համար, և մանավանդ բարոյական այն աջակցության համար, որով Նորին Ս. Օծույթյունը միշտ ղորավիզ է եղել մեզ, և կլինի հենարան ամեն անգամ, երբ դիմենք Նրան:

Վեհափառ Տե՛ր.

Ձեր շնորհաբեր այցելությունը Բուլղարիա այսօր, կպարտինք Նորին Ամենապատիվության նախաձեռնության, Ձեր բարձր անձի հանդեպ Նրա ունեցած եղբայրական խորունկ հարգանքին և սիրուն:

Թո՛ղ Տե՛րը միշտ անսասան պահի Հայ և Բուլղար եկեղեցիների համագործակցությունը, հայ և բուլղար ժողովուրդների դարավոր բարեկամությունը և երկա՛ր, երկա՛ր տարիներ շնորհի Ձերդ Սրբությանց՝ հովվելու Ձեր հայրական խնամքին և հոգևոր վերահսկողության հանձնված Քրիստոսի հոտը, «սու ջուրս հանգստեան»:

Վեհափառ Հայրապետը Ս. Տիրայր եպիսկոպոսի ողջունի խոսքին պատասխանում է օրհնության և գոհունակության խոսքերով, հաղորդելով միաժամանակ վերածնված հայ ժողովրդի սրտագին ողջունը Բուլղարիայի հայ հավատավոր և հայրենասեր ժողովրդին:

Եկեղեցական արարողության ավարտին, ժողովուրդն իր անսահման ուրախությունն ու երախտագիտությունն է հայտնում Հայոց Վեհափառ Հայրապետին աջահամբույրով: Նորին Ս. Օծույթյունը, որպես հիշատակ իր այցելության, խաչիկներ է բաժանում հավատացյալներին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը բարձրանում է հայոց առաջնորդարան, ուր տեղի է ունենում ջերմ ընդունելություն, մտերիմ մթնոլորտում:

Կարճ հանգստից հետո, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել մի շարք բարի գալստյան այցելություններ:

Երեկոյան ժամը 8-ին, Բուլղար եկեղեցու Ս. Սինդդի պալատում, Հայոց Հայրապետի պատվին, տրվում է մտերմիկ ընդունելություն, սեղմ շրջանակում:

Նորին Ս. Օծույթյունը համարվում է Բուլղարիայի Պատրիարք Նորին Ամենապատիվություն Ս. Կիրիլի և Բուլղար եկեղեցու հարգարժան Հյուրը, իր Բուլղարիա այցելության օրերի ընթացքում, և Սոֆիայում բնակվում է Ս. Սինդդի պալատում, որտեղ Նրան տրամադրվում է մի ամբողջ հարկարաժին:

Այցելություններ

Հունիսի 10-ին, հինգշաբթի, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետը, Սինդդի պալատի իր հարկարաժնում, բարեհաճում է ընդունել մի շարք այցելությունները պաշտոնական անձանց և ազգայինների:

Ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետն այցելում է Սոֆիայում սովետական դեսպան պր. Ն. Օրգանովին: Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Վերիկո-Տանովոյի միտրոպոլիտ Ստեֆանը, Ս. Հուսիկ և Ս. Տիրայր եպիսկոպոսներն ու գավազանակիր Ս. Գևորգ վարդապետը:

Հայոց Հայրապետի և պր. դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց սիրավոր մթնոլորտում:

Ժամը 11-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ծաղկեպսակ է դնում բուլղար ժողովրդի հերոս զավակ Գեորգի Դիմիտրովի դամբարանին: Վեհափառին ընկերակցում է իր շքախումբը: Ներկա են պետական իշխանության ներկայացուցիչներ, գլխավորությամբ պր. Քյուչուկովի: Ներկա են նաև ներկայացուցիչները հայ եկեղեցական մարմինների և «Երևան» կազմակերպության:

Ժամը 11.15-ին, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով պաշտոնական այցելություն է տալիս Նորին Սրբություն Ամենապատիվ Ս. Կիրիլ Պատրիարքին, Ս. Սինդդի պալատում:

եկեղեցական երկու պետերի միջև տեղի է ունենում եղբայրական ջերմ զրույց, սրտագին մթնոլորտում:

Ժամը 11.45-ին, Ամենապատիվ Տ. Կիրիլ Պատրիարքը փոխադարձ այցելություն է տալիս Իր շքախմբով Հայոց Հայրապետին, Նրա պալատի հարկաբաժնում:

Երկու բարձրաստիճան հոգևոր պետերի և բարեկամների միջև տեղի է ունենում սրտագին զրույց, ջերմ մթնոլորտում:

Երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը, Սոֆիայի հայոց եկեղեցում, նախագահում է երեկոյան ժամերգության:

Այնուհետև «Երեկոյի» սուրբ պատարագ է մատուցում գեղաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթրույանը, իսկ Վեհափառ Հայրապետը խոսում է հետևյալ քարոզը, ողջունելով և օրհնելով Իր հոգևոր զավակներին.

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»:

Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ.

Աստուծո ռոդրմությամբ և Նորին Ամենապատվություն Կիրիլ Պատրիարքի հրավերով, Մեր քայլերը ուղղվեցան դեպի ձեր երկիրը, դեպի Բուլղարիա, դեպի ձեզ, հավատացյալ եղբայրներ Մեր: Մեզի համար հույուժի և քաղցր հիշատակներու պահ մըն է այսօր, վասնզի ահա տասը տարի հետո վերստին կգտնվինք ձեր այս աղոթքի տան մեջ, նորեն ողջույն և օրհնություն բերելու բոլորիդ: Սակայն այս անգամ ողջույնը և օրհնությունը կուզան ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն:

Ս. Էջմիածին լոկ անուն մը չէ մեզի համար: Ան նույնիսկ լոկ գաղափար մը չէ, ոչ ալ սովորական սրբավայր մը: Մենք սրբավայրեր շատ ունինք, բոլորն ալ պաշտելի բոլորիս համար հավասարապես: Ս. Էջմիածինը մեր Մայր Սրբավայրն է: Ան հայ ժողովուրդի բազմադարյան հավատքի կեդրոնն է, լույսի և կյանքի աղբյուր, փրկության լաստ մեր տխուր պատմության մեջ հաճախ, ու միշտ հաղթական: Հետևաբար Մենք այս անգամ իբրև Հայոց Հայրապետ, Ս. Էջմիածնեն կուզանք ձեզի, օրհնություն բաշխելու ձեր բարեպաշտ հոգիներուն: Կերենք նաև ողջույն մեր Մայր Հայրենիքեն, Հայաստանեն, ողջույն ձեր հարապատ թույրերեն և եղբայրներեն, որոնք ձեզի պես հավատավոր հոգիներ, հաճախ կուզան մեր հայրենի տաճարներու կամարներուն տակ աղոթելու և ուխտելու, ու նոր կյանքի ուժով լիցքավորվելու, ճիշտ այնպես, ինչպես Մեր հավատացյալ զավակները աշխարհի վրա ուր ալ գտնվին, ինչքան ալ հեռու Հայրենիքեն, Էջմիածնեն, նույն աղոթքը կբարձրացնեն դեպի երկինք: Թող Տերը միշտ անսասան պահե Հայաստանայոց Առաքելական Ս. Եկեղեցին, կենդանի պահե մեր ժողովուրդը իր բոլոր սուրբ ավանդություններով, իր մայրենի լեզ-

վով, իր հայրենասիրությամբ: Թող Աստված Իր հովանին տարածե մեր համայն ազգին վրա, մեր վերածնած Մայր Երկրին վրա և հաջողություն պարգևե մեր ժողովուրդի բոլոր արդար գործերուն և իրականացնե մեր Եկեղեցվո ու ազգի բոլոր ալնիվ բաղձանքները, բոլոր շինարար ծրագիրները, եկեղեցաշեն և հայրենաշեն առաջադրանքները, որպեսզի մեր հինավուրց ազգը շարունակե իր սրբական առաքելությունը եղբայրական ժողովուրդներու շարքին, խաղաղության և բարեկամության կյանքի մը ճանապարհին վրա, իր բաժինը բերելով համաշխարհային արժեքներու գանձարանին մեջ:

Սիրելի՛ հավատացյալներ, Մենք կճանչնանք ձեզ, դուք իրոք հարապատ կավակներն եք մեր Եկեղեցիին և ազգին: Գիտենք, թե դուք ալ այս տարի մեր ազգին հետ ոգեկոչեցիք սուրբ հիշատակը մեր նահատակներուն ճիշտ այնպես, ինչպես ան ոգեկոչվեցավ փառավոր կերպով թե՛ Մայր Հայրենիքեն ներս և թե՛ ի Սփյուռս աշխարհի, ամեն տեղ: Կխորհինք, թե տեղյակ եք այս բոլորին ու հպարտ եք, որ մեր ազգը, թեև աշխարհի մեջ ցիրուցան ու այլևայլ պայմաններու մեջ ամեն տեսակետե, նույնիսկ շատ տեղեր ծուլման ճանապարհի վրա, սակայն այս տարի ապրիլ 24-ը եկավ ապացուցանելու, թե հայության հոգին կենդանի է, առողջ է և միասնական: Ամբողջ հայ ժողովուրդը անխտիր ոտքի կանգնեցավ և միասնական համապային ոգեշնչվումով աղոթեց առ Աստված մեր մոտ 2 միլիոն անմեղ նահատակներու հոգիներուն խաղաղության համար: Բայց հայ սգավոր ժողովուրդի խոսքը միայն աղոթք մը չեղավ, այլ նաև կենդանի արտահայտություն մը համապային գիտակցության, հայրենասիրության, եկեղեցասիրության: Միաժամանակ ուխտի արտահայտություն՝ ի սփյուռս աշխարհի անպաստ պայմաններուն մեջ անխախտ մնալու մեր լույս հավատքին մեջ, հավատարիմ մեր ազգային սրբություններուն և արդար իղձերուն: Հիսուն տարի հետո այդ նահատակության օրերեն ի վեր, հայ ժողովուրդը հրաշալի կերպով անգամ մը ևս ապացույցը տվավ իր կենսունակության, իր հոգեկան ուժերուն, ապագայի նկատմամբ իր ակնկալություններուն: Եվ անշուշտ այս ոգեկոչումին մեջ հայ ժողովուրդը մանավանդ մխիթարվեցավ թե՛ Հայաստանի մեջ, թե՛ ի սփյուռս աշխարհի, իր ներկա հայրենիքի վերածնունդով, այն համոզումով, թե այսօրվան վերածնած Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, ճշմարտապես փառավոր հուշարձանն է մեր նահատակներուն: Մենք ոգեկոչեցինք հիշատակը մեծ եղեռնի մեր նահատակներուն ոչ միայն սուգով և աղոթքով, այլ նաև մխիթարությամբ, թե հայ ժողովուրդը, որ հիսուն տարի առաջ թվեցավ, թե պիտի

քննաշնչվի ընդմիջտ, այժմ ոչ միայն կենդանի է, այլև իր պետությունը ունի, իր Մայր Երկիրը վերաշինեց, ծաղկեցուց և կհառաջդիմե օրե օր, դիմելով դեպի առավել լուսավոր բարձունքներ: Այս մտածումները գիտենք, թե ձեր սրտերուն կխոսին, որովհետև գիտենք, թե դուք մեր Եկեղեցիին և ժողովուրդին հարապատ վավակներն եք:

Մեր ազգը անմահ է, դուք ալ անմահ եք, որովհետև անոր հարապատ վավակներն եք: Հետևաբար միաթարված հոգիով և հպարտությամբ կբերեք ձեր հավատքը և ձեր անունը և այն, ինչ որ ժառանգեցիք սերունդներեն, փոխանցեցե՛ք ձեր վավակներուն և ձեր թոռներուն, որպեսզի անոնք ալ անայլալ կերպով պահպանեն ձեր հավատքը, ձեր ուխտը իրենց սրտերուն մեջ ամուր պահած»:

Պաշտոնական ընդունելություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի

Հունիսի 10-ին, հինգշաբթի, երեկոյան ժամը 8-ին, բուլղարահայ եկեղեցական իշխանությունը, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, կազմակերպում է պաշտոնական ընդունելություն «Բալկան» ճաշարանում, շուրջ 200 հոգու ներկայությամբ:

Սեղանն օրհնում է Վեհափառ Հայրապետը, իսկ այն ձեռնհասորեն ղեկավարում է «Երևան» մշակութային ընկերության նախագահ և «Երևան» շաբաթաթերթի խմբագիր Բ. Թյուֆեեկյանը:

Ընդունելության ընթացքում Վեհափառ Հայրապետի շնորհաբեր ներկայությունը ողջունում են սրտագին ճառերով Տոնովոյի Ստեֆան միտրոպոլիտը, Ս. Տիրայր եպիսկոպոսը, Բուլղարիայի կրոնական գործերի կոմիտեի ներկայացուցիչ Ալ. Սադրկովը, թեմական խորհրդի ատենապետ Օ. Ալաւնյանը, Սոֆիայի հայոց եկեղեցական վարչության ատենապետ Օ. Քյուրալյանը, «Երևան» մշակութային միության կենտրոնական վարչության փոխ-նախագահ Մ. Խաչիկյանը, Սոֆիայի հայ ավետարանական համայնքի հովիվ վերապատվելի Մեսրոպ Փարավազյանը, Վառնայի հայոց եկեղեցական վարչության ատենապետ Ն. Հաճոյանը և ուրիշներ:

Սեղանների շուրջ ստեղծվել է ջերմ, հայրենասիրական մթնոլորտ:

Ճաշկերույթի ընթացքում գործադրության է դրվում նաև երգերից, արտասանություններից բաղկացած գեղարվեստական մի բովանդակալից հայտագիր, որին իրենց շնորհալի մասնակցությունն են բերում հոգեշնորհ Տ. Գեորգ վարդապետ Սեբաղդարյանը, արժանապատիվ Տ. Մեսրոպ Բեռլիյա-



Պլովդիվի հայոց թեմական և թաղական խորհուրդները

և Երզնիսում, ղեկավարությամբ Կ. Կարապետյանի, Կ. Ճոպոյանի, Ն. Հատավյանի և ուրիշների:


Ընդհանուր խանդավառության մեջ հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը, տալով իր օրհնությունը և հայրենաբույր պատգամը բոլոր ներկաներին:

Վեհափառ Հայրապետի նախագահությամբ թեմական խորհրդի նիստ

Հունիսի 11-ին, ուրբաթ, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով ժանոթանում է Սոֆիայի և շրջակայքի տեսարժան վայրերին:

Ժամը 12-ին, Սոֆիայի հայոց եկեղեցու առաջնորդարանում, նորին Ս. Օծուխյան բարձր նախագահությամբ, գումարվում է Բուլղարիայի հայոց թեմական խորհրդի պաշտոնական նիստը:

Նիստը բացվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով, որից հետո գերաշնորհ Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիրոսյանը ողջունում է նորին Ս. Օծուխյան ներկայությունը: Ապա թեմական խորհրդի անունից Ա. Քյուրալյանը



ընթերցում է մի զեկուցում վերջին շրջանի թեմական խորհրդի գործունեության և թեմի եկեղեցիների մասին:

Զեկուցաբերը իր խոսքը վերջացնում է ասելով.

«Վեհափառ Տեր.

Ահա ընդհանուր գծերու մեջ թեմական խորհուրդի գործունեության ամփոփ պատկերը: Թեմական խորհուրդը, առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանի գլխավորությամբ և իր ատենապետ Օննիկ Ասլանյանի ժրջան աշխատությամբ, կարելի է զործ կղնի իր ստանձնած պարտականությունը անթերի կատարելու համար: Այս մասին կզգանք նույնպես Զերդ Վեհափառության հայրական Ս. Աջը և Գերագույն Հոգևոր Խորհուրդի օգնությունը:

Թեմական խորհուրդը ի վիճակի կզգա ինքզինքը այսուհետև ալ եռանդով շարունակել իր գործունեությունը, հանուն եկեղեցվո պայծառության, Բուղարական Ժողովրդական Հանրապետության ծաղկման և հայ ժողովուրդի լավ ըմբռնված շահերուն»:

Նիստի վերջում օրհնության խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը, իր բարձր հայրապետական գնահատությունը հայտնելով թեմում կատարված եկեղեցաշեն, ազգօգուտ և բարի ձեռնարկների համար, շնչելով առաջնորդ սրբազանի և թեմական պատվարժան խորհրդի անդամների սերտ համագործակցության արդյունավետությունը և օրհնում է բոլորին, անելով նաև մի շարք կարևոր թելադրություններ, թեմի սպառնալուծման և պայծառության համար:

Նիստը վերջանում է Նորին Ս. Օծության «Պահպանիչ»-ով:

Հետմիջօրեին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով այցելում է մայրաքաղաքի պատմական հուշարձաններն ու եկեղեցիները, աստվածաբանական ակադեմիայի թանգարանը, ուր ջերմորեն դիմավորվում է տեսուչ Տ. Նիկողայ եպիսկոպոսի կողմից:

Վեհափառ Հայրապետը Պլովդիվում

Հունիսի 12-ին, շաբաթ, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, իր մնացյալ շքախմբով, մեկնում է Պլովդիվ:

Նորին Ս. Օծության ընկերակցում են Տոնվոյի Ստեֆան միտրոպոլիտը, առաջնորդ Տ. Տիրայր եպիսկոպոսը, Բուղարիայի հայոց թեմական խորհրդի ատենապետ Օ. Ասլանյանը և փոխ-ատենապետ Ա. Քյուրդյանը:

Հայրապետական շքերթը հանդիսավորապես պաշնորդվում է Պլովդիվի միտրոպոլի-

տարանի բուղարական Ս. Մարինա եկեղեցին, ուր հայոց հայրապետին դիմավորում և ողջունում է Նարին Սրբաթյուն Ամենապատիվ Տ. Կիրիլ Սրբազան Պատրիարքը, շրջապատված Ս. Սինդդի անդամներով և բարձրաստիճան բոլոր հոգևորականներով:

Տաճարը, շրջափակը, մերձակա բոլոր մայրերը լցված են բուղար և հայ հավատացյալների բազմությամբ, որը երկյուղածորեն ներկա է լինում կատարվող եկեղեցական մաղթանքներին և աղոթքներին: Ժամը 13-ին, Պլովդիվի բուղարական եկեղեցու իշխանությունը, ի պատիվ Հայոց Հայրապետի և Բուղարիայի Պատրիարքի, կազմակերպում է ընդունելություն «Տրիմոնցիում» հյուրանոցում, որն անցնում է ջերմ, եղբայրական մթնոլորտում:

Երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով, այցելում է Պլովդիվի հայոց Ս. Աստվածածին եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով: Նորին Ս. Օծության շնորհաբեր ներկայությունը ողջունում է հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Գևորգ ավագ քահանա Սարյանը, հանուն եկեղեցական վարչության և բոլոր հավատացյալների:

Այնուհետև Նորին Ս. Օծությունը ողջունում և օրհնում է բոլոր ներկաներին և նախագահում կիրակամտի ժամերգության:

Հայրապետական սուրբ պատարագ և քարոզ Պլովդիվի հայոց եկեղեցում

Հունիսի 13-ին, կիրակի, առավոտյան ժամը 10-ին, Պլովդիվի հայոց Ս. Աստվածածին եկեղեցում, հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Վեհափառ Հայրապետը: Ս. Սեդանին սպասարկում են գերաշնորհ Տ. Հուսիկ և Տ. Տիրայր եպիսկոպոսները, հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետը, քահանա հայրեր և սարկավազներ:

Սուրբ պատարագին ներկա են բուղար բարձրաստիճան հոգևորականներ Ստեֆան միտրոպոլիտի գլխավորությամբ, պետական պաշտոնական անձնավորություններ և ողջ հայ գաղութը:

«Հայր մեր»-ի ժամանակ «Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ և զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո» բնաբանով քարոզում է Վեհափառ Հայրապետը, բաշխելով հոգևոր մխիթարություն և օրհնություն համայն հայ ժողովուրդին:

Հավարտ սուրբ պատարագի, Պլովդիվի բուղար միտրոպոլտարանի կողմից, ի պատիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, տրվում է պաշտոնական ընդունելու-

թյուն «Տրիմոնցիում» պանդոկում, ուր ճանր են փոխանակում Ս. Կիրիլ պատրիարքն ու Վեհափառ Հայրապետը:

Ընդունելությանը, որն անցնում է սրտազին ու հղբայրական մթնոլորտում, ներկա են լինում բազմաթիվ պաշտոնական անձնավորություններ, որոնց թվում Կրոնական գործերի կոմիտեի նախագահ Մ. Քյուչուկովը, բաղադրապետարանի և խաղաղության պաշտպանության բուլղարական կոմիտեի ներկայացուցիչներ:

Հոգեհանգիստ ապրիլյան եղեռնի նահատակների հիշատակին և հուշարձանի բացման հանդիսություն

Հունիսի 13-ին, կիրակի, երեկոյան ժամը 6-ին, Պլովդիվի հայոց ազգային գերեզմանատանը, տեղի է ունենում հոգեհանգիստ ապրիլյան եղեռնի նահատակների հիշատակին, հայոց Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ:


Այնուհետև, հանդիսավոր իրադրության մեջ, նորին Ս. Օծովյունը կատարում է հայոց գերեզմանատանը կառուցված նահատակաց հուշարձանի բացումը, ի ներկայության բուլղար և հայ բազմահազար ժողովրդի: Այս առթիվ, Վեհափառ Հայրապետը հուզումնալից ճառով ոգեկոչում է հիշատակը ապրիլյան եղեռնի նահատակներին: Հանդիսության ներկա էին բուլղար բարձրաստիճան հոգևորականներ՝ Ստեֆան միտրոպոլիտի գլխավորությամբ և պետական իշխանությանց ներկայացուցիչներ, գլխավորությամբ պր. Մ. Քյուչուկովի:

Երեկոյան ժամը 8-ին, Պլովդիվի հայոց եկեղեցական վարչությունը, ի պատիվ Հայոց Վեհափառ Հայրապետի, «Տրիմոնցիում» հյուրանոցում կազմակերպում է մեծ ընդունելություն, շուրջ 200 հոգու մասնակցությամբ, որն անցնում է շատ ջերմ ու սրտազին մթնոլորտում:

Ընդունելության ներկա էին նաև կրոնական գործերի կոմիտեի նախագահ Մ. Քյուչուկովը և այլ պաշտոնական անձինք:

Ընդունելության ժամանակ ճառեր են արտասանում Ամենայն Հայոց Հայրապետը, Բուլղարիայի Ամենապատիվ Ս. Կիրիլ Պատրիարքը, Կրոնական գործերի խորհրդի նախագահ Մ. Քյուչուկովը և ուրիշներ:

Գործադրության է դրվում գրական-գեղարվեստական մի հայտագիր: Ընդունելությունը վերջանում է սրտազին և խանդավառ մթնոլորտում:



Մեծ եղեռնի հիսնամյակի հուշատախտակը Սոֆիայի հայոց Ս. Աստվածածին եկեղեցում

(Գործ՝ Հովակիմ Հովակիմյանի)

Այցելություն բուլղարական Բաշկովայի վանք

Հունիսի 14-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, Ստեֆան միտրոպոլիտի առաջնորդությամբ և իր շքախմբի ուղեկցությամբ, ուխտի է գնում բուլղարական Բաշկովայի վանքը, ուր ընդունվում է նորին Սրբություն Կիրիլ Պատրիարքի, վանահոր և բաղամամարդ միաբանության անդամների կողմից, հարգալից մեծարանքով:

Հայոց Հայրապետը առաջնորդվում է վանքի եկեղեցին և իր ուխտը կատարելուց հետո, ողջունում և օրհնում է միաբանության բոլոր անդամներին:

Ժամը 12.30-ին, վանական սեղանատանը, Հայոց Հայրապետի պատվին, տրվում է ընդունելություն Պլովդիվի եպիսկոպոսի կողմից:



Վեհափառ Հայրապետը Պլովդիվում խոսում է եղեռնի հուշարձանի առաջ

Ժամը 15.30-ին, Վեհափառ Հայրապետը, Պլովդիվի ճանապարհով, վերադառնում է Սոֆիա, Բաղկովայի վանքի ուխտավորությունից ստացված լավագույն 'ուպավորություններով:

Երեկոյան ժամը 8-ին, արտաքին գործերի մինիստրության առընթեր Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու և կրոնական դավանության գործերի կոմիտեն, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպում է պաշտոնական ընդունելություն «Ղրիմ» ճաշարանում, որին ներկա է լինում նաև Ամենապատիվ Ս. Կիրիլ Սրբազան Պատրիարք Հայրը, շրջապատված բուլղար միտրոպոլիտներով և Սինոդի անդամներով և այլ հրավիրյալներով: Ընդունելության ընթացքում խոսք են առնում Մ. Քյուլյուկովը և Վեհափառ Հայրապետը:

Այցելություն Բուլղարիայի Մինիստրների խորհրդին

Հունիսի 15-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Սոֆիայում Բուլղարիայի Մինիստրների խորհրդին, ուր ընդունվում է հարգալիր մեծարանքով Մինիստրների խորհրդի առաջին տեղակալ, բանակի գեներալ Իվան Միխայլովի կողմից:

Հայոց Հայրապետի և պր. փոխ-նախագահի միջև տեղի է ունենում սիրալիր զրույց, չնրմ մթնոլորտում:

Պաշտոնական սույն այցելության ժամանակ, Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Ստեֆան միտրոպոլիտը, Ս. Հուսիկ և Ս. Տիրալը եպիսկոպոսները, հոգեշնորհ Ս. Գևորգ վարդապետը, պր. Օնիկ Ասլանյանը:

Տեսակցության ներկա էր նաև Կրոնական գործերի կոմիտեի նախագահ Մ. Քյուլյուկովը:

Հրաժեշտի ընդունելություն ի պատիվ Հայոց Հայրապետի

Հունիսի 15-ին, երեքշաբթի, ժամը 13-ին, Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Ս. Սինոդը, ի պատիվ Հայոց Հայրապետի, «Բալկան» հյուրանոցում կազմակերպում է հրաժեշտի պաշտոնական ընդունելություն, մասնավոր հրավիրյալների մասնակցությամբ, որոնց թվում պետական իշխանության ներկայացուցիչներ Մ. Քյուլյուկովի գլխավորությամբ և բուլղար մտավորականներ:

Ամենապատիվ Ս. Կիրիլ Պատրիարքը, ողջունելով ներկայությունը Հայոց Հայրապետի, ասում է.

«Ձերդ Սրբություն, Ձերդ Գերազանցություն, Ձերդ Մեծություն, Արտաքին գործերի մինիստրության առընթեր Բուլղարական Օրթոդոքս Եկեղեցու գործերի կոմիտեի շատ հարգելի պր. նախագահ, սիրելի հրավիրյալներ:

Նորից մենք արտահայտում ենք մեր ընդհանուր ուրախությունը այն այցելության առթիվ, որ կատարում է մեզ մոտ Ամենայն

Հայոց Պատրիարք-Կաթողիկոսը, Նորին Սրբություն Վազգեն Ա-ը: Մենք երջանիկ պատեհությունն ունեցանք արտահայտելու մեր մեծ հարգանքն ու սերը հանդեպ իրեն, էջմիածնի Կաթողիկոսական Աթոռին և բոլոր հայերին: Մենք շատ զոհ կլինենք, եթե Նորին Սրբությունը զգաց մեր զգացմունքների անկեղծությունը իր ներկա շփումների ընթացքում մեր ժողովրդի, պետության բարձր ներկայացուցիչների, ինչպես նաև Բուլղար Օրթոդոքս Ս. Եկեղեցու նվիրապետության ներկայացուցիչների և հոգևորականության հետ: Մենք չենք կասկածում, որ բուլղար ժողովրդի շատ բնական և եղբայրական դիրքը հայերի, մեր համաքաղաքացիների հանդեպ, տպավորություն թողած չլինի Նորին Սրբության վրա: Մենք չգիտենք տարբերություն դնել, մեր երկրում, բուլղարների և հայերի միջև, և սրա համար է, որ մենք շատ բնական համակրանքով վերաբերվեցինք և վերաբերվում ենք հայ ժողովրդի ընդհանուր ձակապաշտի հանդեպ: Անցյալում, նրանց տառապանքները խորապես արձագանքել են բուլղարների սրտում: Հիստուն տարին նոր լրացավ, անցնող ապրիլ ամսին, հայկական սարսափելի կոտորածների ժամանակից, ի գործ դրված 1915 թվականին Օսմանյան կայսրության մեջ, որոնց ընթացքին մեկուկես միլիոն տղամարդիկ, կանայք, երեխաներ և ծերունիներ կոտորվեցին, միայն այն բանի համար, որ նրանք հայ էին: Մենք հիշում ենք, թե հայկական ազգային այս շանթահարող դժբախտության շարաշուք լուրերը ինչքան եղբայրական համակրանքի զգացմունքներ արթնացրին:

Հազիվ մի քանի տարի էր անցել, երբ մի մեծ նեցուկ, արդյունք Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիայի, լույս աշխարհ եկավ, միևնույն ժամանակում ու հույսը փայլեցին հայ ժողովրդի համար: Հայկական պետությունը հիմնվում էր Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության հասարակության մեջ: Այս իրողությունը անկեղծ ուրախությամբ ընդունվեց նաև Բուլղարիայի հայերի կողմից և նրանց ուրախությունը բաժանվեց ամբողջ բուլղար ժողովրդի կողմից:

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցին պահպանել և մշակել է հարգանքի ու սիրտ զգացմունքներ հայ ժողովրդի և նրա Եկեղեցու հանդեպ: Ներկայումս, երբ նշելու ենք բուլղարական էկզարխ երջանկահիշատակ Իոսիֆի ի Տեր հանգստյան հիսնամյա տարելիցը, կուզենայինք ընդգծել, որ մեր կրոնական նշանավոր դաստիարակներից և առաջին էկզարխներից երկուսը ևս, Անտիմոսը և Իոսիֆը, մեզ հորդորել էին պահել այս



Հացկերույթի սեղանի առաջ

զգացմունքները հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու հանդեպ: Ապրիլյան ապստամբության, ազատագրության պատերազմի ամենաբուռն ժամանակաշրջանում և հաջորդող տարիներին, էկզարխությունը միշտ բարոյական օգնություն և բարեկամական խորհուրդներ է ստացել Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության կողմից:

Այս պատճառով, Բուլղար Օրթոդոքս Եկեղեցին միշտ ջանք է ի գործ դրել երբեք բաց չթողնելու նշանակալի առիթները՝ արտահայտելու համար իր հարգանքը Հայ Եկեղեցու հանդեպ, մեզ մոտ: Մենք կուզենայինք հակիրճ կերպով հիշել միայն մի պարագա՝ 1930 թվականի հունիսի 15-ին, հայոց արքեպիսկոպոս Ստեփանոս Հովակիմյանի հիսնամյակի հանդիսակատարությունը: Այդ շրջանին, Ս. Մինոդի շնորհավորությունները այս բարեպաշտ ծերունուն ներկայացվեցին մեր Եկեղեցու մի ուրիշ բարեպաշտ ծերունու՝ երջանկահիշատակ Վառլամ Լեկիսկու կողմից:

Ձերդ Սրբություն:

Մենք ճանաչում ենք Ձեզ և այս պատճառով գնահատում ենք Ձեզ: Մենք ճանաչում ենք Ձեր կրոնական մեծ գործը, Ձեր եռանդը, առավել ևս բարձրացնելու համար Ս. էջմիածինը, հոգեպես և կրոնական մշակույթի տեսակետից, Ձեր անդուլ ճիգերը՝ իրագործելու համար ամբողջ աշխարհի հայերի հոգևոր միությունը էջմիածնի Կաթողիկոսական Աթոռի հովանու ներքո: Մենք ճանաչում ենք Ձեր մեծ հայրենասիրությունը, ծանոթ ոչ միայն Ձեր հայրենիքում և սովետական ժողովուրդների կողմից, այլ ամբողջ աշխարհում, շնորհիվ այն իրողության, որ հայերը լայնորեն սփռված են աշխարհով մեկ. մենք ճանաչում ենք խաղաղության Ձեր գործու-

նեոլոգիստներ, Հայոց Ս. Եկեղեցու մասնակցությունը խաղաղության համաշխարհային շարժման. մենք ճանաչում ենք Ձեր էկոմենիկի ըմբռնումներն ու ըղձանքները, որոնք ձգտում են քրիստոնեական եկեղեցիների միություն:

Ահա այս բոլորին են պարտ այն հարգանքը, տածված Ձեր լուսավոր անձնավորության հանդեպ, և մեր ջերմեհանդեսն ու անկեղծ բարեմաղթությունները երջանիկ արևաշատության համար, շրջապատված նոր հաջողություններով Ձեր հովվապետական գործերի համար, խաղաղության պայմաններում, ինչպես Ձեր հայրենիքում, սովետական ժողովուրդների մեծ երկրում, այնպես էլ ամբողջ աշխարհում:

Բաժակ բարձրացնենք Վազգեն Ա Սրբազնասուրբ Պատրիարք-Կաթողիկոսի կենացը:

Վեհափառ Հայրապետը պատասխանում է Սրբազան Պատրիարքի ջերմ, եղբայրական խոսքերին նույնքան սրտագին հետևյալ ելույթով:

«Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր Մեր Ի Զրիստոս:

Կան բարեկամություններ, որոնք կարծես թե դրոշմված են Նախախնամության ձեռքով: Մենք կհավատանք, թե այդպիսին է մեր երկուքի բարեկամությունը:

Բարեկամություն մը բնական, անկեղծ և սրտաբաց, փոխադարձ համակրանքի ջերմություն մը ողողված: Եվ այս բոլորին վրա ավելցնենք նաև նույնաման մտածելակերպ մը և դիրքորոշում մը այն հարցերու նկատմամբ, որոնք կդրվին այսօր մեր առջև եկեղեցական և ազգային-հայրենասիրական տեսակետներ: Արդյոք կարելի՞ է երևակայել ավելի ամուր և տևական հիմք բարեկամության և եղբայրության:

Ամեն անգամ, երբ մենք երկուքս կհանդիպինք, անգամ մը ևս կամրապնդվի մեր այս սրտագին բարեկամությունը և առավել կճառագայթե մեր հոգիներուն մեջ եղբայրական փոխադարձ սերը և գնահատանքը:

Հայ Եկեղեցին անցյալի մեջ գրեթե նույն ճակատագիրը ունեցած է, ինչպես Բուլղար Եկեղեցին: Հայ Եկեղեցին ևս իր ժողովուրդին հետ տառապած ու նահատակված է և դարեր շարունակ անոր վիճակված է իր հալածված վավակներուն կյանքի պահպանման, լուսավորության և առաջնորդության առաքելությունը: Այս պատմական իրադրությունն է, որ կբնորոշե Հայ Եկեղեցին և միայն անոր լույսին ներքև կարելի է հասկնալ մեր Եկեղեցիին ոգին ու նկարագիրը:

Մնալով հավատարիմ մեր Եկեղեցիին ազգային ավանդություններուն ու պատմական

առաքելության, Մենք կփափագինք հեռու չմնալ այն աստվածահաճո շարժումն, որ մեր ժամանակներու էկոմենիզմն է: Բաց մտքով ու սրտով Մենք կողջունենք եկեղեցիներու միության զաղափարը Զրիստոսի սիրովն մեջ և կհավատանք, թե բոլոր քրիստոնյա եկեղեցիներու եղբայրական մերձեցումը և գործակցությունը կրնան նոր դարաշրջան մը բանալ ոչ միայն եկեղեցական կյանքն ներս, այլ նաև մարդկության զարգացման ճամբուն վրա:

Կխորհինք, թե եկեղեցիները, լուսավորված և զորացած և միացած Զրիստոսի սիրով, պիտի հանդիսանան վճռական գործոն մը բարերար ազդեցությամբ ժողովուրդներու կյանքի բարոյական հառաջդիմության, բարեկամության և աշխարհի խաղաղության:

Մենք ուրախ ենք հաստատելու, թե մեր երկու եկեղեցիները կարևոր չափով մը հաջողած են կյանքի կոչել այս նպատակները: Արդարև, Բուլղար և Հայ եկեղեցիներու միջև ճշմարիտ էկոմենիկ փոխհարաբերություններ կտիրեն շատոնց ի վեր և ի մասնավորի վերջին տասը տարիներու ընթացքին: Մեր միջև կա փոխադարձ սեր և հարգանք, փոխադարձ գնահատանք ու եղբայրության ոգի ավետարանական իմաստով ու նաև վճռական պատրաստակամություն միասին աղոթելու ու գործելու: Մենք միասին ենք քրիստոնեական եկեղեցիներու խաղաղության շարժման մեջ: Մենք միասին ենք մեր երկու ժողովուրդներու միջև բարեկամությունը առավել խորացնելու ու ամրացնելու աշխատանքին մեջ: Մեր միջև էկոմենիզմ մեր անցյալին սկիզբ առած է, այսօր շոշափելի իրողություն մըն է և մենք կըղձանք, որ ան ապագային իր լուծմին հասնի:

Մենք երբեք չենք կրնար մոռնալ այն ճշմարիտ քրիստոնեական վերաբերմունքը, որ Բուլղար Եկեղեցին և ժողովուրդը ունեցան հայ հալածված քրիստոնյա եղբայրներու նկատմամբ անցյալ դարուն և քսաներորդ դարու սկիզբներուն, առաջին համաշխարհային պատերազմին հետո, երբ բուլղար հայրենիքը փրկության լաստ հանդիսացավ Օսմանյան կայսրության մահվան ճիրաններին պատած հայ բազմություններուն համար: Բուլղար մեծ բանաստեղծ Յավորով իր հույակապ բանաստեղծությամբ խորհրդանշել է կհանդիսանա բուլղար քրիստոնյա ժողովուրդի հարապատ վզացումներուն դեպի հայ ժողովուրդը: Ահա, թե ուրկե՞ն սկիզբ կառնե մեր եկեղեցիներու էկոմենիկ ոգին, խարսխված պատմական խոր հիմքերու վրա, հիմքեր, որոնք կգտնվին նաև մեր հոգիներու մեջ այսօր և հավիտյան:

Այս հանդիսավոր առիթով, Մենք, իբրև Հայոց Հայրապետ, մեր Եկեղեցվո և ժողովուրդի երախտագիտությունը կհայտնենք Բուլղար Օր-



Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Բուլղարիայի Սրբազան Պատրիարքը Ս. Ալեքսանդր Նևսկու Մայր Տաճարում

թողոքս Եկեղեցիին ու ազգին և կվերանորոգենք Մեր իղձը՝ առավել և առավել ամրացնելու մեր միջև սիրո և եղբայրության միությունը, նույն մտածումներով, նույն իդեալներով միասին աշխատելու ձեռք-ձեռքի միջեկեղեցական համաշխարհային եկամենիկ շարժման մեջ, ինչպես նաև ժողովուրդներու բարեկամության ու աշխարհի խաղաղության համար:

Թող Աստված լուսավորե մեր ճամբան և օրհնե մեր գործը:

Չերդ Սրբության կմաղթենք ամբողջական վերականգնում Ձեր մարմնական առողջության: Ձեզի երկար կյանք, սիրեցյալ Եղբայր, որպեսզի Ձեր պայծառ մտքով, Ձեր բարի սրտով և Ձեր սուրբ ձեռքերով շարունակեք Ձեր առաքելությունը բուլղար հավատավոր ժողովուրդի և քրիստոնեական համաշխարհային կյանքին մեջ: Չերդ Սրբությունը անփոխարինելի ոգեկան ուժ մըն էք այսօր մեզ բոլորիս համար: Թող Ձեր ոգին տակավին երկա՛ր, երկա՛ր տարիներ փայլի ու ճառագայթե ի փառս Բուլղար Օրթոդոքս Եկեղեցիին, ի փառս մեր օրերու քրիստոնեության: Ս. Էջմիածնի կամարներուն տակ Մենք միշտ պիտի մնանք Ձեզի աղոթակից, Եղբայր ի Բրիստոս:

Կմաղթենք նաև քաջառողջություն և նվիրյալ աշխատանքի անսպառ եռանդ Ձերդ Սրբության գործակիցներուն, Բուլղար Եկեղեցվո և Ս. Սի-

նոդի պատկառելի սրբազան հայրերուն, որոնք այնքան բարձր հոգևոր հեղինակությամբ և սուրբ ներշնչումներով կանգնած Ձերդ Սրբության կողքին, կաշխատին աստվածահաճո եռանդով ու ջերմ հայրենասիրությամբ:

Եվ Մեր խոսքը վերջացնելե առաջ, սեպուհ պարտ կհամարենք անգամ մը ևս Մեր հարգանքը և երախտագիտությունը մատուցանելու Ձեր վերածնած երկրի բարձր ղեկավարության, Բուլղարական Ժողովրդական Հանրապետության կառավարության՝ այն բոլոր դյուրություններուն և սքանչելի պայմաններուն համար, որոնք ստեղծվեցան այնքան սրտառուչ, բարի ցանկություններով, որպեսզի Մեր այցելությունը Ձեր երկրին մեջ ըլլա հաճելի ու երջանիկ:

Հավետ կեցցե՛ք Բուլղար Օրթոդոքս Ս. Եկեղեցին:

Հավետ կեցցե՛ք բուլղար ազնիվ և տաղանդաշատ ժողովուրդը:

Միշտ արև, միշտ խաղաղություն և միշտ փա՛ռք բուլղար Մայր Հայրենիքին:

«Այլ ինքն Աստուած և Հայր մեր և Տէր մեր Յիսուս Բրիստոս ուղղեսցէ զճանապարհս մեր առ ձեզ: Եւ զձեզ ինքն Տէր բազմապատիկս և առաւելս արասցէ սիրով ընդ միմեանս և առ ամենեսին, որպէս և մեք ի ձեզ» (Ա. Թեսաղ. Գ. 11—13):

Ամեն:

**Խորհրդակցություն Ամենայն Հայոց Վեհափառ
Հայրապետի և Բուլղարիայի Սրբապան
Պատրիարքի միջև**

Հունիսի 16-ին, չորեքշաբթի, առավոտյան
Ժամը 10-ին, Ս. Սինոդի պալատում, տեղի
ունեցավ հատուկ հանդիպում և զրույց երկու
եկեղեցիների Պետերի միջև, Բուլղար և Հայ

եկեղեցիների հարաբերությունների ամ-
րապնդման և հետագա զարգացման մասին,
էկումենիկ ոգով:

Այս առթիվ, Կիրիլ Պատրիարքը և Վեհա-
փառ Հայրապետը խմբագրեցին և ստորա-
գրեցին հետևյալ պաշտոնական հաղորդա-
գրությունը.

«ՀԱՄԱՏԵՂ ԶԵԿՈՒՅՑ

ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑՎՈ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-Ի, 1965 ՀՈՒՆԻՍ 9—16, ՈՐՊԵՍ ԲՈՒՂԱՐ
ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑՎՈ ԵՎ ԱՆՈՐ ԳԱՀԱԿԱԼ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՐԶԻ
ՀՅՈՒՐ, ՍՈՅԻԱ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԹՎ

Նորին Սրբություն Վազգեն Ա Սոփիայի
մեջ ընդունվեցավ ի Տեր Հիսուս եղբայրա-
կան սիրով և Հայաստանյայց Ս. Եկեղեցվո
հանդեպ հարգանքի բարձր վկայությամբ:

Նորին Սրբությունը իր այցելության ըն-
թացքին արտահայտեց իր ջերմ սերը Բուլ-
ղար Օրթոդոքս Ս. Եկեղեցվո և բուլղար ժո-
ղովուրդի, ինչպես և իր խոր հանգամանք
Բուլղարաց Սրբազան Պատրիարքին և Բուլ-
ղար Եկեղեցվո սուրբ նվիրապետության
հանդեպ:

Նորին Սրբությունը Սոփիայի և Պոլիդիի
մեջ աղոթեց իր հայ հավատացյալ հոտին
մեջ, որ ջերմագին սիրո և հավատարմության
որդիական գգացումներով դիմավորեց իր
Հոգևոր Պետ:

Երկու եկեղեցիներու Գահակալներու և
բարձրաստիճան հոգևորականներու միջև
տեղի ունեցան կարծիքներու փոխանակում-
ներ ավետարանական ոգիով՝ եկեղեցիներու
մերձեցման և գործակցության, աշխարհի

խաղաղության և ժողովուրդներու եղբայրու-
թյան հարցերու շուրջ: Լիակատար համա-
ձայնություն գոյացավ այն մասին, թե ան-
հրաժեշտ է առավել ջանքեր ի գործ դնել
կենսագործելու համար Աստուծո կամքը ի
խնդիր ի Քրիստոս եղբայրության հավա-
տացյալներու, ի խնդիր ժողովուրդներու
առավել միասնության, փոխադարձ համա-
խոհության ոգիով և եղբայրության, ինչպես
և ջերմագին աղոթքներով և գործնական
նիզերով աշխարհի խաղաղության պան-
պանման և ամրապնդման համար:

Նորին Սրբություն Մայրագույն Պատ-
րիարք Վազգեն Ա-ի այցելությունը և իրեն
ցույց տրված հյուրընկալությունը կրճառ-
շեն, որպես նոր նպաստ մը, հայ և բուլղար
ժողովուրդներու, ինչպես նաև Սովետական
Միության և Բուլղարական Ժողովրդական
Հանրապետության միջև գոյություն ունեցող
ավանդական եղբայրության ամրապնդման:

ՎԱԶԳԵՆ Ա

Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս
Ամենայն Հայոց

ԿԻՐԻԼ

Պատրիարք Բուլղարաց

Սոփիա, 16 հունիս 1965:

**Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում
Բուլղարիայից**

Հունիսի 17-ին, հինգշաբթի, վերջին օրն
է հովվապետական այցելության:

Ժամը 8-ին, Սոփիայի միջազգային օդա-
նավակայանում, Հայոց Հայրապետին ան-
ձամբ ճանապարհում են Բուլղար Օրթոդոքս
Եկեղեցու Պետ, Նորին Սրբություն Ամենա-
պատիվ Տ. Կիրիլ Պատրիարքը, Կրոնական
գործերի կոմիտեի նախագահ Մ. Քյուլյուկո-
վը, Խաղաղության պաշտպանության բուլ-
ղարական ազգային կոմիտեի, մայրաքաղա-
քի ժողովրդական խորհուրդների, Սովետա-

կան և ուսմիական բարեկամության կոմի-
տեի ներկայացուցիչներ, բուլղար բարձրաս-
տիճան հոգևորականներ, Բուլղարիայի հա-
յոց թեմական խորհրդի և եկեղեցական վարչ-
ությանց անդամներ, «Երևան» մշակութա-
յին միության կենտրոնական և տեղական
վարչությանց ներկայացուցիչներ, բազմաթիվ
բուլղարահայ հավատացյալներ:

Ժամը 8-ին, ինքնաթիռը բարձրանում է
Եթեր և ուղղվում դեպի Բուխարեստ:

Բարի ճանապարհ Ամենայն Հայոց Հայ-
րապետին:





Վեհափառ Հայրապետը, Ամենապատիվ Տ. Կիրիլ Պատրիարքը և Ս. Սինոդի անդամները



Համատեղ հաղորդագրության ստորագրումը